

և վիճարանութիւններն ու հարցերն բնութեան ձևը:

Ամեն տեղ ընդունված է, որ երբ մի խնդիր պիտի առաջարկվի ընդհանուր ժողովին բնութեանը, նախ և առաջ ընտրվում է ընդհանուր ժողովից անդամների մի սահմանափակված թիւ, որը կազմում են մի մասնաժողով: Այդ որ մասնաժողովը մշակում է մի խնդիր, այն ժամանակ նա դառնում է ամբողջ ժողովի բնութեան առարկայ: Ընդհանուր ժողովը այն նշանակութիւն ունի, որ մասնաժողովից բնած և մասնաւորապէս մշակված խնդիրը ներթափանցում է ընդհանուր ժողովին՝ աւելի բազմակողմանի կերպով քնննվում է, բան թէ կարող է այդ անկ հինգ վեց անկերից բաղկացած մասնաժողովը: Բայց ինչ ենք տեսնում մեր Թիֆլիսի քաղաքացիներն վարչութեան ընդհանուր ժողովի մէջ: Այստեղ երբ հարցը առաջարկվում է ընդհանուր ժողովին բնութեանը, դարձեալ խօսողները և ձայն տուողները լինում են նոյն մասնաժողովի անդամները, այսինքն հինգ վեց անկեր, իսկ պատգամաւորների բաղկութիւնը լուր է մնում: Առաջարկի հանդիսականի մէջ ծնվում է այն համոզմունքը, որ պատգամաւորների բաղկութիւնը բաղկացած լինելով քաղաքացիներ զործերին անտեղիակ մարդիկներից, ժողովի մէջ իշխում են հինգ վեց կրթված մարդիկը, իսկ մնացածները ակամայ ենթարկվում են նախագահի ու անդամների այն սահմանափակված թուի վճռին:

Այդպէս էր մեր առաջին տպաւորութիւնը: Բայց որքան դաւանեցանք մենք, երբ նախ միջոցներում, թէ դաշինքի մէջ թէ դրսի անցքերում, մեզ աջողկեցաւ խօսել այդ անձայն պատգամաւորներից մի բանիմանի հետ: Մենք համոզվեցանք, թէ նրանց մէջ կայ առողջ դատողութիւն, գործի հետ փորձնական ծանօթութիւն, սուր կրիտիկ...

Այժմ մենք տարակուսած հարցնում էինք մեզ՝ ինչ էր նրանց կամակոր լուրթեան պատճառը, որ առիթ տալով միայն մի բանիմանքին ձայն բարձրացնելու և խօսելու, վնասում է հասարակաց գործին, երբեք չէ պարզելով ընդհանուր խնդիրը բաղկացածների կերպով: Այդ երեւոյթը հետազոտելով, շատերին հարց ու փորձ անելով, մենք հասանք այն համոզմունքին, թէ այդտեղ երկու գլխաւոր արդիւր կայ՝ մինը որ պատգամաւորների մեծ մասին, բաղկացած հասարակ վաճառականներ:

Բոլորովին նիւթական նպատակը դէպի ամուսնական կապը, մինչ այն աստիճան կուրացրել են թիթեանիտ, բայց մի և նոյն ժամանակ կրթութեան ներխուժողին, որ նա արտասուքը աչքերում թողնում է և հեռանում է Նատից...

IV.

«Քանդուած օջախ» մէջ բոլորովին հակառակը Օսէփին, որպէս նորա հակապատկերը, հանդիսանում է մի այլ տիպ—«Խլոցիցն Մաթուսի վերթի փարսիլը»: Այդ անձնաւորութիւնը մի հարազատ ծնունդ է մեր անկարգ, փշացած, հասարակական կազմակերպութեան: Մտեւելով, դարձանալով անբարոյական չրջանի մէջ, ուր միշտ խաբում են, կողոպտում են, մի խօսքով, ամէն կիստուտ միջոցներ գործ են գնում միայն արծաթ որսառու նպատակով, փարսեղը կազմել է իւրեան մի ամբողջ գաղափար, թէ աշխարհում սուրբ բան չէ կայ: Հիմունքներով այդ փարսեղանութեան վերա, փարսեղը իւրեան ներքին է կացուցանում բոլոր անարդար հնարները հարստանալու և նա հասնում է իւր նպատակին: Մածկելով իւր կիստուտ անցեալը ոսկու թիթեանի տակ, փինաչի Մաթուսի տղան հանդիսանում է որպէս պատուաւոր քաղաքացի, նա ստանում է վարկ և կշիռ, նորան պատվում են և երգրապաշտ են: Նորա առեւտրական խանութը պատկերացնում է այն հիմնարկութեանը, եթէ կարելի այդպէս ասել, այն ընկալան, ուր պատրաստվում են այդպիսի փարսեղներ, այդպիսի պատուաւոր քաղաքացիներ, խաբեւորներ, ստախոսութիւնը և խորամանկութիւնը՝ գլխաւոր դասախօսութեան առարկայքն են, որը քարոզվում են այդ ընկալանի ամբողջութեամբ: Գլխաւոր պատգամաւորներն են խաղում, նորա աշակերտները հպատակում են նորան, որպէս մի բարձր հեղինակութեան: Փարսեղը գործում է իւր ընտանիքի մէջ, ինչ որ է իւր առեւտրական խանութում: Նա կամենում է այնպէս «զլիկիցը ռազ անել» իւր աշխիւրդ—տան անպէտք վաճառքը, որպէս նորա ուշիմ աշակերտ Գարչուն «սաղաքրեց փխած ապրանքը խեղճ սրդնաղէցու վերա ծախելով, Նա կամենում է և այդ առեւտրի մէջ մրցութիւն անել իւր հակառակորդի

ից և արվեստաւորներից, անձանթ է ուսերէն լեզուն, այնպէս որ ոչ թէ միայն նրանք գիտարանում են իրանց մտքերը այդ լեզվով յայտնելու, բայց և շատ անգամ բնական լինելով և բուէարկութեանը առաջարկված հարցը պարզ չեն հասկանում:*)

Եւ ինչ նախագահ է թոյլ տալիս քաղաքի պատգամաւորներին իւրանց առօրեայ, անհրաժեշտ, կենսական պիտոյքի մասին խօսելով, —յայտնել իրանց կարծիքը ընդհանուր ժողովի մէջ այն լեզվով, որ աւելի հասկանալի է ու մատչելի նրանց... Արտասահմանում մենք տեսած ենք ժողովներ (օրինակ Էջմիցարիայում), որտեղ հրապարակաւ նախ ժամանակ գործածական էին երեք լեզու...

Նմանապէս մի ուրիշ պատճառ կայ, որ մեր պատգամաւորները չեն համարձակվում խօսել հրապարակաւ այդ այն զգացմունքն է, որ ասիացու մէջ դարկելով արմատացած լինելով, մինչև այսօր տիրում է մերոնց վրա՝ երկիւղը աղաների առաջ ձայն աւաղու, անկախութիւն յաղթել իր մէջ ստրկական զգացմունքը... Զիչեցնում ենք մեր պատգամաւորներին, որ շուտով պիտի շնորհված լինի մեզ քաղաքացիներ ազատ ինքնավարութիւնը... այդ տեսակ երկիւղը իր միտքը յայտնելու, որտեղ որ աղաներ են խօսում, որք քուցէ իրանք բոլորը չեն հասկանում սեփական ասածից, Այդ տեսակ երկիւղը, կրկնում ենք, արժանի է ինքնավարութեան ներկայացուցիչների...

Այնպէս մենք խօսողանում ենք, մենք շատ ժողովներ տեսած ենք ամբողջ Լուրդալում՝ սխառ աղապիւն և քաղաքացիներ ժողովներից, մինչև մշակների ժողովները, —բայց երբեք պատահած չենք այնպիսի ժողով, որտեղ նախագահը ստիպված լինելու բոլոր ժամանակ ինքն խօսելու ժողովի անդամների լուրթեան պատճառով:

Ամեն տեղ նախագահ առաջարկում է նախ և առաջ ամենքին յայտնելու, կառավարում է վիճարանութիւնները և արդէն յայտնած մարերից դուրս է բերում միջին միտքը, ձեակերպում է ժողովի վճռները:

*) Օրինակ նորերումս քուէարկութեան առաջարկվեցաւ հարցը՝ հարկաւոր է թէ ոչ քաղաքի հաշվով նախապատրաստական հետազոտութիւններ անել ջրի և գազի մասին: Իսկ քուէարկողներից միւրը համոզված էր որ քուէ գցելով իր համաձայնութիւն է տալիս թիֆլիսում ջրանցք շինելու համար:

վում է իւր մեծ աշակերտի Գարչոյի, այդ պրիվատ-դոցենտի յառաջադիմութիւնը իւր ուսման մէջ և նախագուշակում է նորա բախտաւոր ապագան, որին նա մի օր կը հասնէր այդ կիստուտ ճանապարհներով, փարսեղը նախատում է, մինչև անգամ ծնունդ է իւր գուքնի փղբրիկ աշակերտ անմիջ Միխայիլ, նորա անընդունակութեան համար, որ նա չէր կարողանում կտաւը ձգելով, և արչին տակ սրլացնելով, օրինակի համար, տասը գաղը՝ տասնութուսի տեղ ծախել: «Դուս մարթ չիս դառնայ» ասում է ուստան խեղճ աշակերտի աւանջներին ձիգ տալով:

Այլքի առաջ ունելով այդպիսի փարսեղները, աչքի առաջ ունելով նոցա առեւտրական խանութները, ուր պատրաստվում են իւրեանց նման վաճառականներ, ինքն ըստ ինքեան պարզվում է այն հարցը, թէ ինչու մեր, հայերիս մէջ շատ փոքր են թւում օրինաւոր և իւրեանց գործը խղճմտանքով փարզը առեւտրական մարդիկը: Թայտիք բան է, որ Օսէփները մի մասնաւոր բացառութիւն են կազմում այդ փշացած դասի մէջ: Նոքա, լինելով փոքր ի շատ իւրեանց խղճմտանքով կենդանի մարդիկ, չեն կարողանում ազատ մրցութիւն անել ամենայն խաբեւորութեամբ զինուորած բաղմութեան հետ, և նոքա ընկնում են: Ահա գլխաւոր անբախտութեան պատճառը Օսէփի և նորա ընտանիքի:

V.

Փարսեղը այն է իւր ընտանիքի մէջ, ինչ որ է իւր առեւտրական խանութում: Նա կամենում է այնպէս «զլիկիցը ռազ անել» իւր աշխիւրդ—տան անպէտք վաճառքը, որպէս նորա ուշիմ աշակերտ Գարչուն «սաղաքրեց փխած ապրանքը խեղճ սրդնաղէցու վերա ծախելով, Նա կամենում է և այդ առեւտրի մէջ մրցութիւն անել իւր հակառակորդի

Արկնում ենք՝ ցանկալի կը լինէր որ մեր քաղաքացիներ վարչութեան ընտրեալները հասկանային իրանց իրաւունքները:

Ո՞Վ Է ՄԵԿԱՆՈՐ

Ընթերցողը «Մշակի» Զդ համարում տեսաւ մեր այժմեան հոգեւորականութեան ամենամիջոց պատկերը: Երբայի շատ խիստ է «Մշակի» դատաւճիւրը հոգեւորականութեան դէմ, բայց ինչ անես: Մեր հոգեւորականութիւնը շատ խուլ է երեւում մեզմ և քաղցր յորդորանաց ձայնին:

Տարակոյս չկայ որ «Մշակի» ներկայացրած այս պատկերը մեր համայն հոգեւորականութեան չէ վերաբերում: «Զկայ կանան առանց բացառութեան» ասում է առածը: պէտք է խօստովանել որ կան յիշատի հոգեւորականներ՝ որոց ծառայութիւնը չը գնահատել մեր կողմից աններելի սխալներ կը լինէր: Բայց աւա՛յ, նոյա թիւը գիտատարաւ խիստ անընշան է և այն էլ աչքի փուշ է հոգեւորական դասի մեծագոյն մասի համար, որոց իսկ վերաբերում է «Մշակի» արգար դատաւճիւրը:

Այս առաջին անգամն է որ հոգեւորականութիւնը մեր դրականութեան մէջ տեսնում է իւր պատկերը: Նորա քաջագործութիւնը վաղուց մեծ նիւթ են դառել մեր դրականութեան մէջ: «Հիւսիսափայլը» որոց ծառայութիւնը անմոռանալի պիտի լինի ամենայն Հայի սրտում, այս նիւթն էր նու իրիւ իւր գործունէութեան ուղղութիւնը, իւր գլխաւոր նպատակը: Այս նիւթը սահմանափակում է միայն «Հիւսիսափայլի» էջերով: 1) Նա այնքան ընդհանրացած կարող է համարուել որ ժողովրդական երգերում ևս ունի բունած իւր արժանաւոր տեղը: ամենայն Հայի ծանօթ աղգային բանաստեղծ Սէյիադն (Մաղաթեանց) իւր երգերից մինի մէջ (որ գրուած էր 1858 թուին) ներկայացնում է մեզ հոգեւորականի կենդանի պատկերը: 2) «Վառա՛ւ Վաթիկան» նոյնպէս ներկայացրել է մեզ «արեղայի» պատկերը: Այլ ի՞նչ պէտք է սար ու ձոր, տէրտէրի փուր՝ ասում է աւամկական առածը, որից պարզ

1) Խօստովանում ենք՝ որ մենք անձանթ ենք մեր տաճկաբնակ եղբարց զրականութեան հետ: 2) Տես «Նոր Գնար Հայաստանի» Սէյիադի երգերն, տետր. Բ. էջ 144 և 33:

հետ: Այդ ձեռնարկութեան մէջ նորան գործակից է լինում իւր կինը՝ Քալին: Նոքա միասին խորհող են անում խել Օսէփի և նորա կնոջ Սալոմէի ձեռքից, նոցա աղջկայ Նատոի նշանածը—Ալեքսանդր Մարմարովին: Այնպիսի ամէն բաների չիտուելու և քանդուելու գլխաւոր ուժը միայն փողի մէջ ճանաչող հայ վաճառականը՝ ձեռք է առնում այդ զօրաւոր գործիքը, Նա խօստացել էր տալ Մարմարովին 100 թուման աւելի, քան Օսէփի խօստացածը, այլ և ամենայն խորամանկ հնարներով աշխատում է վերջինիս զրկել իւր նիւթական միջոցներէն, կոտորել նորա վարկը առեւտրի մէջ, որպէս զի նա չը կարողանայ վճարել խօստացած արծաթը իւր փնտջութիւն: Յիշեալ դաւադրութեանց մէջ փոքր չէ օգնում փարսեղին նորա աշակերտ Գարչուն, որը սկսում է սուտ լուրեր տարածել Օսէփի գործերի աւերում իր ձեռքի մասին, և հրապարակաւ պահանջել այն գումարը, որ Օսէփը պարտական էր իւր ուստային: Փարսեղը իւր կողմից ուրախում է Օսէփից որպէս գրաւ ստացած «չարչի բարաթները» և գործը դատաստանին հասցնելով: Օսէփի դուքանը կնքել է տալիս: Օսէփը անանդանում է: Այն նորա աղջիկը Նատուն, որպէս յիշեցի, զրկվում է յիմար և մի և նոյն ժամանակ շահասէր Մարմարովի կինը լինելուց:

Ի հարկէ Օսէփի անակութեան գլխաւոր պատճառը պէտք է որոնել, ոչ միայն փարսեղի չաբանեց դարանագործութեանց մէջ, որ նա վերջինիս մի հարուածքովը կտրուեցաւ դէպի ակումբ, այլ նորա գործերի անհաստատ և փխած տրամադրութեան մէջ, որոնք շատ տարիների հասարակական և տնտեսական պայմանների հետեանք են: Եւ ինչ որոնց ակամայ կերպով ենթարկու էլ խեղճ Օսէփը:

Իրեւում է ժողովրդեան հայեացքը հոգեւորականի վերայ—

Ժողովրդեան կենդանի ձայնը ամենուրեք յորդուում է հոգեւորականաց դէմ: Ո՞ւմ կամիք հարցրէք հոգեւորական դասի վերայ ոչինչ չէք լսել, բայց եթէ ոչ զանգատ նոցա պակասութեանց վերայ, նոյա ժողովուրդը կողոպտելու վերայ և այլն և այլն: Միով բանիւ հասարակական կարծիքը հոգեւորականութեան օգտին չէ:

Այժմ մենք աշխատենք քննել, թէ ընդուց է այս բոլորը յառաջ գալիս, թէ ընդու հոգեւորականաց և աշխարհականաց դասերը միմեանց պայպէս խորթ են, ինչ է սորա պատճառը, ո՞վ է այստեղ առաւել մեղաւոր, ժողովուրդը թէ հոգեւորականութիւնը, թէ երկուսն էլ—Այնքան նախ նորանից թէ ո՞րք են եղել ցալոք (դուցէ և յետոյ պիտի լինեն, ժամանակին ենք թողնում վճռել) մեր հոգեւորականութեան կողմը ընդունողները: Աշխարհօրէն առած կայ որ շատ ուսում առնողին կ'ասեն. «վարդապետ հօ չի դառնալու» բայց այս առածը, կարկի է առանց այլ և այլութեան ասել լով խօսք է դառել այժմ մեզանում, որ զուարճախօսութեան մէջ է բերվում առանց ամենայն մտքի, կրկնում ենք այս մի լոկ դրոյց է մեզանում որ հնուէն, այո, պիտի ունենար մի միտք, մի նշանակութիւն և որ այժմ միայն նոյաժամանակաց գիւղում թերեւ ունենայ իւր առաջուկ միտքը, որովհետեւ մեր գիւղայրում գրէթէ միայն քահանայը հմուտ են կարգալու և զրկու՝ որ այնտեղ գիտութեանց Ա. և Վ. են է, այս պատճառաւ իսկ այնտեղ ամենայն կարգացողի «տիրացու» են անուանում: Իսկ ինչ որ կը վերաբերի քաղաքների ժողովրդեան, նորա մէջ այս առածը, աւա՛յ, վաղուց արդէն տեղի է տուել մի նոր և շատ ճիշտ առածի. «տէրտէր հօ՞ կը դառնայ»: Վարդ և շատ պարզ է սորա միտքը, որտեղ մի ծոյլ, անհոգ և բոլորովին տգէտ ու անբարոյական պատանի է ծաղկում, որի մասին երկմտվում են և մատանջվում են նորա ծընողը և բոլոր ազգականները ու բարեկամները՝ որք հաստատ համոզված են որ նորանից մարդ չի դառնալ ժամանակին, որ նա անընդունակ է որ և ից է դործունէութեան, որ նա ժամանակին չէ կարողանալու նաեւ իւր կեանքի ամենակարեւոր պիտոյքը հոգալու և այլն... Ինչ է կարծում, ինչ է լինում նորա վերջը... յանկարծ նորա և նորա շրջապատողների մէջ մի

VI.

Որպէս երկրորդական տիպեր օգնողուած օջախիս մէջ հանդիսանում են Օսէփի կողմից՝ Գէվոն նորա մտերիմ բարեկամը, իսկ փարսեղի կողմից՝ Գիթ Մոզին՝ նորա մերձակոր ազգականը, Գէվոն երեւում է մի թոյլ բնաւորութիւն, թէ և բարի և խղճմտանքով մարդ: Նա իւր բարեկամի դժբախտութեանը չէ կարողանում այլ բանով օգնել, միայն նորա մտանդանալու ժամանակ բաւականանում է նորանով, որ չէ ցանկանում պահանջել նորանից այն գումարը, որը Օսէփը պարտական էր իւրեան: Իսկ Գիթ Մոզին չէ կարելի տեսլ, թէ իսկական տիպ է, նորան կարելի է համարել, մի երեսակայական մարդ, որին ստեղծել է հեղինակի քանքարը, փարսեղի բոլոր չարագործութիւններին և նորա կիստուտութիւններին թարգման լինելու: Իսկ ինչ որ վերաբերում է օգնողուած օջախիս բեմական նշանակութեանը, պէտք է ասել, որ նա յօրինուած է բաւականին զեղարուեստական կերպով: Տիպերը հանդէս են դուրս գալի խիստ յատկանիշ բնաւորութիւններով: Իսկ ինչու, խօսքերը, արտայայտութիւնը՝ հնչվում են ժողովրդի սրտի և հոգու խորքիցը: Չանձրացնում միայն մեծ լոգները երկարութիւնը, և է ֆէ կ'աւ զերջանալու միջոցին խիստ սառն է, երբ այն տխուր դրամատիկական կեանքը, լոտիսաղ կնիկները նորից սկսում են վիճել իւրեանց անպատկութեան մասին որ զրկուեցան իւրեանց զուարճութիւնից:

Այնչափում եմ իմ նկատողութիւնները այդ խօսքերով: որ օգնողուած օջախը է մի ցաւալի ողբերգութիւն, որ պատկերացնում է մեր ժողովրդի քանդուած դրութեան տխուր կործանելիքը, և նորա անկումը թէ բարոյապէս և թէ նիւթականապէս...